

## ԲՈՆՈՒՄ-ՄԱԼՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲՄ համակարգը կիրառվում է ԱՊՊԱ պայմանագրում սահմանված ապահովադրի նկատմամբ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության, համայնքի և օտարերկրյա պետության անունից կնքված պայմանագրերի գծով որպես ապահովադիր սույն հավելվածի իմաստով դիտարկվում է նրանց անունից ԱՊՊԱ պայմանագիրը կնքած մարմինը:

Առաջին անգամ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու դեպքում ապահովադրին տրվում է ԲՄ բազիսային դասը: Առաջին ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո (անկախ հետագայում ԱՊՊԱ պայմանագրի կնքման հանգամանքից) ապահովադրի ԲՄ դասը սույն հավելվածի աղյուսակ 1-ով նախատեսված ԲՄփոփ հաշվարկման համար պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում պայմանի առաջացման ամսաթվին վերահաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա (մնացած ժամանակահատվածում ապահովադրի ԲՄ դաս է համարվում վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դասը)

$$ԲՄ = ԲՄ_{նախ} \pm ԲՄ_{փոփ},$$

որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝

Աղ.1

ԲՄ	Ապահովադրի ԲՄ դասն է	
ԲՄ <sub>նախ</sub>	Ապահովադրի վերջին անգամ հաշվարկված ԲՄ դասն է	
	ԲՄ դասի փոփոխությունն է՝ հաշվարկված հետևյալ եղանակով	
	ԲՄփոփ =	<p>(+U), եթե <math>J \geq 0,412</math></p> <p>(0), եթե ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր և այդ օրը <math>0,103 &lt; J &lt; 0,412</math></p> <p>(-1), եթե ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր և այդ օրը <math>J \leq 0,103</math></p>
	Որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝	
ԲՄփոփ	U	մալուսային դասերի քանակն է և հավասար է J կարգավորող գործակցին՝ դրա կոտորակային մասը մինչև ամբողջական թիվ կլորացված (0,412-ից փոքր նիշերը կլորացվում են դեպի ներքև, իսկ մեծ կամ հավասար նիշերը՝ դեպի վերև)
	J	կարգավորող գործակիցն է և հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա
	$J = 4 * (1/C_1 + \dots + 1/C_n)$ , որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝	
	C <sub>n</sub>	Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկից հետո տեղի ունեցած n-րդ ԲՄ դեպքի հիմք հանդիսացող պատահարի պահին Ապահովադրի անունից կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագրերում նշված SU-ների քանակն է: Ընդ որում՝ ԲՄ դեպք է համարվում ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցում վճարելու որոշման կայացումը, որը պայմանավորված է տվյալ ապահովադրի

	<p>կողմից կնքված պայմանագրում նշված որևէ ավտոտրանսպորտային միջոցով 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո պատճառած վնասի հատուցման հետ, բացառությամբ այն որոշումների, որոնք կայացվել են 2019 թվականի ապրիլի 1-ից հետո տեղի ունեցած ԱՊՊԱ պատահարների գծով, և որոնց հիման վրա վճարված ողջ գումարը, ինչպես նաև հատուցման վճարման և (կամ) հետադարձ պահանջի իրականացման գծով տվյալ Ապահովագրողի կողմից պարտապաններից գանձվող այլ ծախսերը (փորձաքննությունների վճարներ, դատական ծախսեր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ և այլն) վերադարձվել են Ապահովագրողին՝ սույն կանոնների 18-րդ գլխով նախատեսված հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի առկայության հիմքով: Մինևսույն ԱՊՊԱ պատահարի համար տվյալ ապահովադրի գծով հատուցում վճարելու վերաբերյալ մեկից ավելի որոշում կայացվելու դեպքում հիմք է ընդունվում միայն այդ որոշումներից առաջինը:</p>
Պայմանագրային օր	2012թ. դեկտեմբերի 31-ից հետո ընկած օրերի քանակ, որոնց ընթացքում առկա է եղել Ապահովադրի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագիր (պայմանագրեր):

Միջին կամ բարձր ռիսկային դասում գտնվող և վերջին 1460 պայմանագրային օրվա ընթացքում անընդմեջ ընդհանուր առմամբ (-4) դաս ստացած Ապահովադիրը վերջին բոնուսային դասի ստացման ամսաթվից ստանում է ԲՄ բազիսային դասը:

ԲՄ դասի հաշվարկն իրականացվում է ապահովադիրների վերաբերյալ Տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության հիման վրա:

**ԲՄ դասին համապատասխանող գործակիցները մեծություններն են**

ԲՄ խումբ	ԲՄ դաս	ԲՄ գործակից
<b>Բարձր ռիսկային</b>	դաս 22	250%
	դաս 21	250%
	դաս 20	250%
	դաս 19	200%
<b>Միջին ռիսկային</b>	դաս 18	144%
	դաս 17	140%
	դաս 16	132%
	դաս 15	124%
	դաս 14	116%
	դաս 13	112%
	դաս 12	108%
դաս 11	104%	
<b>Բազիսային</b>	դաս 10	100%

<b>Ցածր ռիսկային</b>	դաս 9	97%
	դաս 8	94%
	դաս 7	91%
	դաս 6	88%
	դաս 5	85%
	դաս 4	82%
	դաս 3	75%
	դաս 2	65%
	դաս 1	50%

Ապահովադրի ԲՄ դասի հաշվարկման ժամանակ սույն գլխով սահմանված հանգամանքները հիմք են ընդունվում՝ անկախ ավտոտրանսպորտային միջոցի կամ ապահովագրական ընկերության փոփոխման հանգամանքից: